Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 9 ՅՈՒԼԻՍ 1905 — ԹԻՎ 729

ՇԱՐԺՈՒՄ

ԱՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 «
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 «

Մացուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Վարձայի համար ձեռքի 10 սանթիմ է

Նամակ եւ դրամ ղրկելը խնդրագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du jonrnal „Charjoum“ (Bulgarie) Varna

Պոլսոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի հայկար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻԲԼԻՈՆԵՐԸ

—oo—

Հ. Ց. Դաշնակցութեան բիւրոները, Արեւելեան և Արեւմտեան, որոնք ըստ ծրագրի՝ ոչ մի իշխանութիւն չը պէտք է ունենային և ոչ մի ներգործական դեր կազմակերպութեան մէջ՝ ընդհակառակը չնորհիւ ստեղծված սիստէմի և Դաշնակցութեան անձնաւորում հանգուցեալ Քրիստափորի թեւարկութեան, իրականութեան մէջ եղել են մի մի կեդրոններ, մանաւանդ դրամական տեսակէտով, ուայդ նիւթական միջոցները ինքնուրոյն կերպով և յաճախ բոլորովին իրենց քմահաճոյքի համաձայն գործածողներ. նրանք յաճախ բռնել են եւ հրամայողական դերը դէպի երկրի մարմինները աշխատելով նրանց ինքնորոյնութիւնը և իրաւունքները բռնաբարել և այդ բոլորը երբեմն մեր արդէն նկարագրած ժողովների որոշումների վրա հիմված կամ թէ ինքնաբերաբար. Այդ մարմինները կազմված լինելով ծոյլ, դանդաղ. միապետական ձգտումներով. երկրի պայմանների անծանօթ, մեծ մասամբ սիրող յեղափոխական մարդկանցից շարունակ բողոքների տարափի են ենթարկվել և վստահութիւն չեն վայելել գործիչներից և մարմիններից: Եւ բողոքները բիւրոների դէմ դեռ շատ վաղուց սկսված են, որը փաստելու համար մենք կրկին կը դիմենք հանգուցեալ Քրիստափորի նամակին գրված 1897 թուականին:

«Այնուհետ, Գ. Մ. ի և մասամբ ձեր նամակում երկիւղ է արտայայտուում թէ Բիւրո խմբագրատունը մի տեսակ կենտրոնացում է առաջ բերում կազմակերպութեան մէջ. Այդ միանգամայն սխալ կարծիք է. բիւրոյի դերը ներգործական չէ, ընդհակառակը դա մի հիմնարկութիւն է, որի կարեւորութիւնը բխում է հէնց ապակենտրոնացման սկզբունքից».

Այս տողերից յետոյ հանգուցեալը սովորական դարձած բացատրութիւններով, Բիւրոյի իրական էութեան մասին, աշխատում է փարատել ժամանակին հեռատես ընկերների կողմից արտայայտված վախը Արեւմտեան բիւրոյի մասին: Մինչդեռ կեանքը ապացուցեց որ «Արեւմտեան բիւրոն» դարձաւ այն, ինչից որ վախցում էր. թէ հետզհետէ որքան բիւրոները անհամակրելի, բարոյապէս անվստահելի են եղել ընկերների առջեւ մենք կրկին կը բերենք փաստեր, ընկերների նամակներից, խուսափելով մէջտեղ բերել երկու կովկասեան եւ մի Տաճկահայ կարեւոր գործիչներից փաստեր, որոնք իրենց յարաբերութիւնները դեռ տարիներ առաջ խզելով բիւրոցիների հետ, հեռացել են գործից ղրզված յեղափոխական սիրողներից և բիւրոների միապետական ձգտումներից ու քայլերից: Այդ երկու գործիչներն են Վահանեան—Պոլսոյ 94 ի, 95, եւ 96 ի հսկայական ուժը ստեղծողը, Բաքու Փոստարարուժաքի Պոլսոյ 96ի հոչակաւոր Կոնսիլ Դ՝արմէնին(*).

Մենք ընդհակառակը փաստեր պէտք է բերենք այնպիսի ընկերների նամակներից, որոնք միշտ լաւ են եղել Բիւրոների հետ:

1903. յունիս 10

Սիրելի Վարդո,

. . . . . .

«Նամակիդ մէջ չես բացատրեր, թէ ինչո՞ւ այդպէս շուտ հեռացար Փրնէվէն. չէ որ որոշեցինք որ մեկնումդ 15 20 օր յետաձգելով Գ... ի հետ միասին Հ... խնդիրը կարգադրես: Իմ մեկնելէս յետոյ ի՞նչպէս եղաւ որ այդ խնդիրն ալ ջուրն ինկաւ: Գ... ի գրածէն այնպէս կը տեսնուի որ բիւրոցիները փառաւորապէս խաբեր են ձեզ:

. . . . . .

Այս վրան բաց խաբէութենէն էտքը Գ... դեռ կը մնայ Փրնէվ»:

Նոյն նամակագիրը գրում է վերջին ընդհանուր ժողովի մասին:

21 յուլիս 1903

Սիրելի Վարդո,

. . . . . .

«Ես միայն այնքան տեղեկութիւն ունիմ, որ ընդհ. ժողովի հրաւէրները արդէն ցրված պիտի ըլլան այս օրեր: Ժողովատեղին կարծեմ չեն նշանակած. կերեւայ թէ նախորդներուն նըման մենք մեզի ժողով մը պիտի ըլլայ: Այս պարագային ես աւելորդ կը համարեմ մասնակցել

Ծ. Ն. խմ. Զարմանալի է որ այդ երեք կարեւոր գործիչները չէին հրաւիրված ընդհանուր ժողովին... ժողովին: Մասնակցողները, թերեւս քանի մը անձնական բացառութեամբ պիտի ըլլան այն տեսակ մարդիկ, որոնք արդէն առաջուց գիտեն միմեանց կարծիքները, ուստի վստահօրէն կարելի է նախագուշակել որ արդիւնքը նոյնը պիտի ըլլայ, ինչ որ եղաւ մեր ընկերական երեւելի ժողովինը».

Այժմ բերենք երկրի գործիչի կարծիքը և դժգոհութիւնը բիւրոյի եւ Կ. Կոմիտէի դէմ:

3 սեպտ. 1902

Սիրելի Վարդո,

«Փիլիպէէն չը մեկնած, Ռոստոմին հետ կարգադրեցինք որ մեր . . . . հասնելէն վերջը հոս տեղի ծախքերուն համար պէտք եղած դրամը Փիլիպէի կոմիտէն պիտի տայ, երբ պահանջենք. և ապագային մեծ դրամը խմբագրութենէն (բիւրո) պիտի ստանանք: Այս վստահութեամբ մենք ալ եկանք. հոս հասնելէս վերջը գրեցի Փիլիպէ որ 500 ֆրանք ղրկեն. հապա 17 օրէն այն ալ կրկին ստիպողական մէկ նամակիս վրայ գրեցին որ Ռոստոմը գտնուած դրամը առած հետը տարած է և հինգ բարայ չըկայ: Եթէ ապագային դրամ հաւաքվի, կը ղրկեն: Ինչ աղուոր պատասխան. մարդ մը ողորմութիւն ուզողին ալ այդպէս չի պատասխաներ:

Ալ կրնաք երեւակայել վիճակնիս. ապշած շարած մնացինք. Ռոստոմին ուր ըլլալը չենք գիտէր: (Վերադարձել էր Կովկաս. խմբ.): Երբ նամակ մ՝ալ ղրկեցինք դեռ պատասխան չեկաւ. ութ օր կայ որ խմբագրութիւնն (բիւրո) գրեցի. բայց ես երբէք վստահ չեմ թէ գոնէ անոնք քիչ մը ուելի աղնուարար վարուին:

Ի՞նչ կրնանք ընել հիմա. երկու հոգի. մէկէն, այս կրակէ քաղաքին մէջ, գոր մի ամեն միջոցէ. գիրքերնիս խախտած. Մ . . . երբէք ճանչուր մը չունի. իս ալ ճանչցողները, նոյնիսկ ընկերներ հեռու կը փախչին ժանտախտէ վարակեալի մը պէս. Այսչափ ալ խաբել կըլլա՞յ. Անբարոյականութիւն չէ՞ այս:

Արդ, սիրելի Վարդո, զաւկիդ սիրուն համար ըլլայ, ուր գրել պէտք է, և ինչ տեսակ գրել պէտք է, այս սարսափելի վիճակէն ազատելու քեզ կը յանձնարարենք, խնդրելով որ միջոց մը գտնես. մենք ի՞նչ կրնանք ընել ասկէ, այն տեսակ ընկերներու հանդէպ, որոնք պարտճանաչութիւն չունին. ձգել փախչիլն ուրիշ միջոց չի մնար:

«Դու հոս գտնուած ըլլալով շատ լաւ կը հասկնաս դրութիւնիս, մանաւանդ արդի ժամանակիս մէջ: Աստուած սիրես Վարդո բարձի թողի չընես և շուտով գրես մեզ ալ».

Համբոյրներով ԹՈՐԳՈՄ:

Ու այս տեսակ նամակներ ուղղված են ինձ երկրի ուրիշ տեղերից էլ Բիւրոյի դրամ չը տալու, միապետական ձգտումների բանտում գտնվող ընկերներին մոռացութեան տալու համար, որոց թուելը այլեւս աւելորդ եմ համարում:

Այս փաստերն էլ կը բաւեն, ապացուցելու թէ ինչ են եղել բիւրոները և թէ ինչպէս հակառակ այս տգեղ մինչեւ երկինք բողոքող դէպքերի դառն իրականութեան բիւրոյականները մեր եկեղեցական հին թաղականների պէս կարողացել են շարունակ մնալ իրենց գրաւած դիրքերում. չնորհիւ մեր արդէն նկարագրված ընդհանուր ժողովների եւ ստեղծված սիստէմի:

Սիստէմի ստեղծողը ունէր առաւելութիւններ, որոնք իրաւ նրան յարգելի էին դարձնում. ունէր տակտ գոնէ փոքրիկ զիջողութիւններ անելու ժամանակի պահանջին յարմար, ունէր ընդունակութիւն որոշ օգուտներ տալու կազմակերպութեան. բայց նրա լաքէյները այդ չունեն կը այլ եւս հանդուրժելը, կազմակերպութեան դեկը դրանց ձեռքում թողնելը բացարձակ կազմակերպութիւնը մեռցնել, սիստէմի տիրապետութիւնը յաւիտենական դարձնել է նշանակում որը սկսել է արդէն վարակել եւ կազմակերպութեան ստորին կարգի մարմիններին:

ՎԱՐԴՈ

ԷԼԻԶԷ ՌԷՔԼԻՒ

Անցեալ օրեր Պելճիգայի մէջ մեռաւ հռչակաւոր գիտնական և յեղափոխական անիշխանական Էլիզէ Ռէքլիւն։ Էլիզէ բացառիկ թիբերէն մէկն էր, գիտական աշխատութիւնները անոր չէին խանգարեր զբաղիլ և ընկերական խնդիրներով, գործնականապէս մասնակցիլ ըմբոստացումներու բռնութեանց դէմ, ինքզինքը անխուսափելի վտանգներու ենթարկելով։ Եւ մենք պարտաւոր կըլլանք զմեզ «Շարժումի ընթերցողները» ծանօթացնել մարդկութեան այդ մեծ դէմքերէն միոյն հետ։

Ռէքլիւ Ֆրանսացի բողոքական բասթօրի մը, որ յայտնի էր իր բարեպաշտութեամբ և ճշմարտութեամբ, զաւակն է։ Իր միջին կրթութիւնը ստանալով Բրուսիոյ մէջ, վերջերը բարձրագոյն կրթութիւնը կաւարտէ Ֆրանսայի Մօնդպան քաղաքին բողոքական համալսարանին մէջ։ 1851ին Պերլինի մէջ կը հետեւի հռչակաւոր աշխարհագրագէտ Քարլ Ռիթէրի դասախօսութիւններուն, ուր և անոր մէջ կարթընայ սէր դէպի երկրագնտի կազմութիւնը, որուն և կը նուիրէ իր գիտական ամբողջ ասպարէզը։

1898 թուին, երբ ամբողջ Եւրոպան ռամկավարական հիացումով ու յոյսերով բռնկուած էր, Ռէքլիւ, թէեւ դեռ շատ երիտասարդ կը խառնուի յեղափոխական գործերու։ Բայց 51 երբ Նաբոլէօն Գ. կը խեղդէ հասարակապետութիւնը, Ռէքլիւ մեծ եռանդով կը բողոքէ այդ ոճրագործութեան դէմ. և պարտաւորուած կըլլայ կամաւորապէս օտար երկիր աքսորուիլ։ Ատկէ կսկսուի հեռաւոր թափառումները։ Փիչ մը Անգլիա մնալէն յետոյ կերթայ Ամերիկայ, որը զայն կը հրապուրէր իր կուսական և հսկայական բնութեամբը և ռամկավարական բարքերովը։ Ռէքլիւ կը պտըտի ամբողջ Ամերիկան 1857ին կը վերադառնայ հայրենիք բեռնաւորուած փորձերու և դիտողութիւններու ահագին պաշարով։ Ահա այդ միջոցին լոյս կը տեսնան իր աշխարհագրական ուսումնասիրութիւնները որոնք զօրեղ տպաւորութիւն կը գործեն իրենց ընդարձակ տեղեկութիւններով և մտքի ներհուն թեամբ։

Բայց միայն գիտական գործունէութիւնով չէր գոհանար Ռէքլիւ. անոր հոգին կը թրթռար ընկերական ամէն հոսանքի հանդէպ. որ. կը յուզէր ժողովուրդը։ Ուղիղ այդ միջոցներուն էր որ գործաւորական շարժումը սթափուելով 48 թուականի ծանր փորձութիւններու վախէն, նորէն կեանք կառնէր։ Ռէքլիւն եղաւ «Ինթերնասիոնալի», հրաբորբոք անդամը։

Ատկէ վերջ կսկսի Ֆրանքոֆրանսական պատերազմը. Ռէքլիւ կը կռուի իբրև հասարակ զինուոր Բարիզի պաշարման միջոցին և վտանգաւոր յանձնարարութիւններ կը կատարէ, Բարիզէն օդապարիկով դէպի գաւառները երթալով։

Բարիզի Քոմունան կը հիմնուի. Ռէքլիւ իր ամբողջ հոգիով կը մասնակցի անոր. բայց Քոմունան կըբխրտակուի և Ռէքլիւ կը ձերբակալուի ու յաւիտենական բանտարկութեան կը դատապարտուի գաղթավայրերու մէջ։ Այդ միջոցին ամբողջ գիտական աշխարհը կը բողոքէ. Տարվինը կոչ կընէ Եւրոպայի։ Կառավարութիւնը ստիպուած ներհում կը շնորհէ և բանտը կը վերածէ աքսորի։

Ատկէ վերջ Ռէքլիւ կը հաստատուի Զուիցերիոյ մէջ, ու յարաբերութիւններ կոտեղծէ ռուս ոչնչականներու հետ. և վերջը ֆրանսական անիշխանականներու գլուխը կանցնի։

Թէեւ յեղափ. բայց Ռէքլիւ համակրանքը կը վայելէր ժողովրդի բոլոր դասակարգերուն, որովհետեւ անոր ամբողջ կեանքը անկեղծութիւն և հաւատք էր։ Ռէքլիւ ունի շատ մը գիտական աշխատութիւններ որոնք զարմանք և հիացում կը պատճառեն։

Իր հռչակը սասցած է շնորհիւ հսկայական հեղինակութեանը, «Համաշխարհային աշխարհագրութիւն» անունով, որ բաղկացած է 17 մեծ հատորներէ։ Իսկ նոր վերջացուցած աշխատութիւնն է «Երկիրը և մարդիկ» որը շուտով պիտի հրատարակուի, և պիտի կազմէ մեծ մարդուն գիտական գործունէութեան եզրակացութիւնը։

Գանտիա 18 յունիս 1905

Առ

Ամենապատիւ Տ. Տ. Մաղաքիա Սրբ. Արք-եպիսկոպոս Օրմանեան Պատրիարք Կ. Պոլսոյ եւ Նախագահ Ազգ. կեդրոն Կրօնական Ժողովոյ

Ի Կ. Պոլիս

Ամենապատիւ Սրբազան Հա՛յր,

Ստորագրեալքս Գանտիոյ հայ գաղութի անդամք՝ ներկայ հանրագրութեամբս կուզանք խոնարհաբար ներկայացնել մեր գանգատներն առ Ձերդ Սրբազնութեան, կաղերսենք որ այլեւս բաւ համարելով՝ տեղւոյս տէր Գէորք քհյ. Հիւրմիւզեանը քաղաքէս հեռացնելու հրահանգներն յղէք առ որ անկ է, որով թէ մեզ պիտի փրկէք, թէ տէր Գէորգը և թէ հայ գաղութիս պատիւը, որովհետեւ տէր Գէորգ այլեւս տեղւոյս գաղութին համար անհանդուրժելի մեծ պատուհաս մը դարձած է. բրած անիրաւութեանց, ստախօսութեանց եղեալ թէ Արինայի հետ է ապրում։

Ու կամաց կամաց Աֆանասիէն պատմեց ինձ թէ ինչպէս Բուրուն վիրաւորանքների ազդեցութեան տակ ինքը գաղտնիքը բացել էր նրան։ Եւ հեռացաւ։

Ի մեծ զոհունակութիւն Բուրունը չուշացրեց իր խոստացած երկար ու մանրամասն նամակը։ Նամակը բերեց Վանիան, ուրախ եւ զարթ, եւ անթափանցելի աչքերով, որոնցից անկարելի էր հասկանալ թէ գաղտնիքը գիտէր թէ ոչ։ Այդ տեսակ աչքեր ունենում են կամիկ դերասանները, գաղտնի հիւանդութեանց բժիշկները, եւ ժանտարմ սպաները։ Վանիչկան նամակը բերեց ինձ անմիջապէս։ դեռ ոչ ոքի չը հանդիպած, ես համոզվեցի որ Պրովօսլայի գրաքննիչներից ազատ էր մնացել, որը ինձ այնքան տհաճօրէն զարմացրեց առաջին նամակի առթիւ։

Բուրունը գրեթէ մի ամբողջ հատոր էր գրել։

«Թանկագին Ալէքսանդր Վալէնտինովիչ,

Ասում են թէ երբ Աստուած ուզում է մէկին պատժել, առաջ խելքն է առնում։ Վախենում եմ որ հէնց այդ դժբախտութիւնը պատահեց ինձ հետ Պրովօսլայում։ Իմ վարմունքս Վիկտորիա Պավլովնայի հետ, քննելով գտնում եմ յիմար, անտակտ եւ ինձ ամբողջովին մեղաւոր։ Ինքս ինձնից այնքան եմ ամաչում որ, եթէ հնար լինէր նրանից ներողութիւն ընդունելու, չը պէտք է կա-

---

Զ. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

45

Թ.

(Շար. նախորդ թիւեն)

Դուք նրան դեռ չէք ճանաչում, պատասխանեց Աֆանասիէը, իսկ ես վաղուց այստեղ եմ, գիտեմ, օրինակներ կան։

—Ի՞նչ. օրինակներ, միթէ՞...

—Ոչ, ինձ չէ. շտապեց իմ չարումս ցրվել, այդ դժբախտութիւնը դեռ գլխովս չէ անցել, ուզում եմ ասել ծեծը. նկուղը դրել են, չեմ թագցնի, Արինան ինձ հարբած դրել է այն տեղ, իմ անկարգութեան համար բայց ծեծը դեռ չէ եղել. ուրիշների հետ է պատահել։

—Էհ ուրեմն Արինան ծեծել է ինչ որ երեխաների, ասացի ես անվստահութեամբ։

—Չէ, չէ. կուտովին ճանաչում է՞ք։

—Լսել եմ.

—Այ, նրա կառավարչին, գերմանացի։

—Նոյն իսկ գերմանացի. ի՞նչի են ծեծել. այդ շատ լուրջ է։

—Աղջիկներին շատ էր վշտացնում. ... որոնք կալւածում աշխատում էին. ու ոչ թէ համաձայնութեամբ, այլ բռնութեամբ, կարծես հաստատված տուրքի նման։

Արինան նրան իր մօտ հիւր է կանչում թէյի եւ ծեծում Խոհարարուհի Անիսան եւ Գուրնիկովցի երկու գեղջկուհիներ բռնում են գերմանացուն, անպատւած աղջիկները նայում. իսկ Արինան գանահարում է։ Պէտք է ասել որ գերմանացին էլ խոշոր մարդի մէկն էր։

—Էհ, իսկ հիմա ո՞ւր է այդ գերմանացին։

—Մեր կողմերից հեռացաւ. պարտաւորվեց պաշտօնը թողնել. որովհետեւ խայտառակման լուրը շուտ եւ ընդարձակօրէն տարածվեց։ Իր կինն էլ բաժանվեց, ասելով—չեմ կարող քեզ հետ ապրել. կիները քեզ ծեծել են, շատ ամօթալի է։

—Արինան նրան հարբեցրել էր ի՞նչէ։

—Ոչ առանց դրան։

Բայց ի՞նչի գերմանացին դատարան չը դիմեց։

—Խնդրեմ. ամօթ էր. յետոյ եթէ քննութիւն բացվէր իր գործերն էլ, աղջկերանց հետ, երեւան պէտք է գային... Սակայն գերմանացին եկել էր Արինային հրացանով սպանելու։

—Սպանելո՞ւ։

—Այո, այդ մի քիչ յետոյ, երբ պաշտօնից զրկվեց եւ պատրաստվում էր հեռանալ մեր կողմերից, ու իր ունեցած չունեցածը սայլի վրա դրած ճամբա էր ընկել։ Արինան եւ Անիսան պուրակում սունկ էին հաւաքում, ու յանկարծ Անիսան տեսնում է, որ մի քիչ հեռուն, թփերի միջից, ինչ որ փայլում է. գերմանացին քօթուկի ետեւը նստած հրացանը ուղղել է Արինայի կողմը։ Արինան գոռում է. գերմանացին էլ չէ արձակում։ հեռանում է։

—Ու գերմանացին հնազանդեց եւ հեռացա՞ւ։

—Այո, որովհետեւ Արինան նրան շատ անհաճոյ բաներ էր ասել։

—Օրինակ ի՞նչ։

—Ի՞նչի, թփի ետեւից, գաղտնի կերպով հրացանովդ ես նշան առնում ես չէի թագնվում, մէջքդ լաւ ծեծեցի պատուաւոր հասարակութեան առջեւ. իսկ դու հրացանովդ փոսն ես մտել...

Նայիր, չը վրիպես. եթէ վրիպես նորէն այնպէս կը ծեծեմ որ կառքդ էլ նստել չես կարող։

—Կարելի է որ գերմանացին բոլորովին էլ միտք չէ ունեցել հրացան արձակել. այդպէս երեւակայել են միայն։

—Էհ, չը գիտեմ. այն ժամանակ Անիսան անտառից վերադարձաւ ձիւնից սպիտակ, կէս ողջ կէս մեռած։

—Իսկ Արինա՞ն։

—Նրան ինչ. ծիծաղում է. այդպիսի օրինակներ շատ կան։ Օրինակ, Կէլէպովի կառապանին, որ պարծեցել թէ Արինայի հետ է ապրում։

Ու կամաց կամաց Աֆանասիէը պատմեց ինձ թէ ինչպէս Բուրունի վիրաւորանքների ազդեցութեան տակ ինքը գաղտնիքը բացել էր նրան։ Եւ հեռացաւ։

Ի մեծ զոհունակութիւն Բուրունը չուշացրեց իր խոստացած երկար ու մանրամասն նամակը։ Նամակը բերեց Վանիան, ուրախ եւ զարթ, եւ անթափանցելի աչքերով, որոնցից անկարելի էր հասկանալ թէ գաղտնիքը գիտէր թէ ոչ։ Այդ տեսակ աչքեր ունենում են կոմիկ դերասանները, գաղտնի հիւանդութեանց բժիշկները, եւ ժանտարմ սպաները։ Վանիչկան նամակը բերեց ինձ անմիջապէս։ դեռ ոչ ոքի չը հանդիպած, ես համոզվեցի որ Պրովօսլայի գրաքննիչներից ազատ էր մնացել, որը ինձ այնքան տհաճօրէն զարմացրեց առաջին նամակի առթիւ։

Բուրունը գրեթէ մի ամբողջ հատոր էր գրել։

«Թանկագին Ալէքսանդր Վալէնտինովիչ,

Ասում են թէ երբ Աստուած ուզում է մէկին պատժել, առաջ խելքն է առնում։ Վախենում եմ որ հէնց այդ դժբախտութիւնը պատահեց ինձ հետ Պրովօսլայում։ Իմ վարմունքս Վիկտորիա Պավլովնայի հետ, քննելով գտնում եմ յիմար, անտակտ եւ ինձ ամբողջովին մեղաւոր։ Ինքս ինձնից այնքան եմ ամաչում որ, եթէ հնար լինէր նրանից ներողութիւն ընդունելու, չը պէտք է կա-

թեանց, հայհոյանքներու, զրպարտութեանց և խատութեանց չափը ու սահման անցած է։

Տեղւոյս հայ գաղութը, վերոյիշեալ պատճառներէ սոսկալեալ 17 երկար ամիսներէ ի վեր զրկուած է հոգեւոր մխիթարութենէ. Եկեղեցի չենք այցելեր, պատարագ չենք տեսներ, այս բոլորը տեղի ունեցած են մինչեւ այսօր տէր Գէորգի անհաշտ և ոխակալ բնութենէն, հետեւաբար եթէ ժամանակ մը դեռ եւս շարունակէ հոս մնալ, մեծ գայթակղութեանց տեղի պիտի տրուի, ուստի ի սէր հայ ազգի պատւոյն, կրկին անգամ կը խնդրենք և կաղերսենք Ձերդ բարձր Սրբազնութեան և պատկ. Կրօն. Ժողովոյ արժանապատիւ անդամոց և սոյն հանրագրութիւնը թէ Ձերդ սրբազնութեան և թէ Պատկ. Կրօն. Ժողովոյ նկատառման կը յանձնենք։

Լաւ է մեզ առանց քահանայի մնալ քան թէ տէր Գէորգի նման անկարող քհյ. ունենալ, որովհետեւ անոր այս ընթացքը տեղւոյս հայ գաղութը դէպի լոյն եկեղեցին գիմել կստիպէ։ Յուսալով որ մեր սոյն արդարացի գանգատներն նկատողութեան պիտի առնուի Ձերդ բարձր Սրբազնութեան և պատկ. Կրօն. Ժողովոյ կողմէ։

Մատչելով ի համբոյր
Ս. Աջոյդ Մնամք Ձերդ

Սրբազնութեան խոնարհ որդիք
Թաղ. խորհուրդ Ս. Կրպ. եկեղեցւոյ Գանտիոյ
(կնիք)
Անդամք Գանտիոյ հայ գաղութի
(Ստորագրութիւնք 26 անձանց)

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

—( )—

«Լը ժուրնալ» թերթի աշխատակից Նօտօ, Թօքիօյէն կը գրէ.«ինծի համար շատ հաճելի էր ընդունուիլ կոմս Մացուքութայէն, ազդեցիկ մարդ մը — Ճափոնիոյ մէջ եւ լսել անոր թիբիքական մէկ քանի յայտարարութիւնները։ Մացուքութան ժամանակակից ճափոնի խաղաղ սաեղծագործողներէն մին է. կայսրը անոր խորհուրդներուն մտիկ կընէ, եւ կոմսը կը վայելէ կայսեր վստահութիւնը։ Մացուքութա քանի մը անգամ նախարար ըլլալով տնտեսագիտութեան եւ ելեւմտից մէջ ընդունակութիւնները ապացուցած է. 1896 ին ան մտցուց ոսկէ դրամի գործածումը Ճափոնիոյ մէջ։ Եւրոպան յաճախ այցելած միջոցին բոլոր կուսակցութեանց պետերուն հետ տեսակցութիւններ ունեցած է։ Ֆրանսացի տնտեսագէտ Լէօն-Սէյի բարեկամը կը համարուէր։ Լուպէի հետ ալ քանի մը անգամ քաղաքական խօսակցութիւններ ունեցած է. Ռուսիոյ մէջ ալ Վիթէի հետ չորս օր անցուցեր է, որուն անկեղծ բարեկամը դարձած է։

Կոմս Մացուքութային տուած առաջին հարցը հաշտութեան պայմաններու մասին էր։

— Ոչ պատասխանատու անձերու յայտարարութիւնները, պատասխանեց ճարոնցի պետական մարդը. չէ կարելի ընդունիլ իբր մեր ժողովրդին ցանկութիւնը եւ ձգտումներու արտայայտութիւնը։ Մեր լիազօրները գիտեն Ճափոնիոյ ստանալիք օգուտներուն մինիմումը. Վաշինգթըն ղրկուած մեր լիազօրները են որ պիտի քննեն հաշտութեան պայմանները, բայց ոչ Թօքիօյի հրապարակագիրները եւ ճառախօսները։

Համարձակեցայ հարցնել պատերազմական տուգանքի մասին, ու ան պատասխանեց.

—Ռուսիան անսահման վարկ կը վայելէ եւ տուգանք չը վճարելու համար աղքատութիւնը իբր պատճառ բերել չի կրնար, ինչպէս գիտէք այդ ստակներով է որ պիտի կնքուի հաշտութիւնը։

ՃԱՓՈՆԻՈՅ ԵԼԵՒՄՏԻՑ ՎԻՃԱԿԸ

—Էհ, ի՞նչ կրնաք ըսել ինծի ձեր երկրին ելեւմտական վիճակի մասին, հարցուցի ես։

— Ահա թէ ինչ. եթէ պատերազմը շարունակել պէտք է, մենք պատրաստ ենք. հակառակ տուրքերու խիստ բարձրացման մեր երկիրը դեռ ընդունակ է աւելի բարձր անուղղակի տուրքերու, ու աս շնորհիւ մեր պատերազմական ելեւմուտքին լաւ վարուելուն։ Անոր մէջ ամեն ինչ այնքան լաւ նախատեսուած է. որ, ոչ միայն երբեք ծախսերը գերազանցած չեն ժողովրդի տուրք վճարելու կարողութիւնը, այլ եւ հասած չեն դեռ անոր։

Մենք պատերազմը վարեցինք, կարելի եղածին չափ խնայողական պայմաններու մէջ ու մեր ծախքերու մեծ մասը վճարած ենք մեր սեփական միջոցներէն, մեր հարազատ երկրէն։

Ատոր հետ միասին այդ դրամները կը շրջանառուին Ճափոնիոյ մէջ. ահա թէ ինչո՛ւ պահանջելով մեծ պաշարներ աւելի նոր եւ խոշոր ազգային ճիգերու համար, գիտենք թէ մեր ուժը ուղղակի հետեւանքն է մեր միութեան ձգտումներու ցանկութեանց բացարձակ համաձայնութեան։ Եթէ կամք կայ. կայ եւ կարելիութիւն։ Պատերազմական գործողութեանց սկիզբները քանի մը օտար հրապարակագիրներ կը պնդէին թէ մեր դրամական ուժը չը պիտի բաւէր քանի մը ամսուան պատերազմի համար։ Իրաւունք ունէի՞ն. կը հարցնեմ ձեզի այսօր։

Տեղի համարեցի կոմսին նկատել որ ռուսները կռուային ի դերեւ հանել ամեն որոշում շարունակ նահանջելով եւ հաշտութիւն չը կայացնելով։

Կոմսը պարզօրէն պատասխանեց.

— Մենք ամեն հաւանականութիւնները նկատողութեան առած ենք. ինչ որ ալ պատահի չը նախատեսուած անցք մը չըկայ, որ մեզ յանպատրաստի գտնէ։

ՌՈՒՍ-ՃԱՓՈՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՎԵՐՋԸ

—Մտածեցէք, շարունակեց կոմսը, թէ ինչ տեսակ պիտի ըլլան ռուս-ճափոնական յարաբերութիւնները պատերազմէն վերջը։ Մենք եւ ռուսները իբր բարի դրացիներ ապրելու համար նոյն շահը ունինք։ Պատերազմական գործողութիւններու ատեն եղածները, այդ տեսակէտով, լաւ նախագուշակումներ են հաշտութիւնը կնքելէն վերջը գալիք շրջանին։ Մահարբր ճակատամարտերէն վերջը, ինչպէս էր Բօրթ Արթուրը ինքնաբերաբար բարեկամական յարաբերութիւններ ստեղծուեցան այն

ըողանայի Նրա աչքի առջեւ կանգնել։ Ես Նրան առանձին եմ գրում ի հարկէ ձեզ չէ հետաքրքրում թէ իմ խեղճ սիրտս ինչ է զգում դէպի Վիկտորիան։ Կասկածում եմ որ ես արդէն ձեր ուշադրութիւնը շատ ծանրացրի իմ դատարկ ճառախօսութիւններովս այդ միակերպ Նիւթի մասին։ Բոլոր սիրահարները անձնասէրներ են եւ չեն հասկանում թէ որքան ձանձրալի են ուրիշների համար զգացումները եւ յուզումները որոնք միայն իրենց համար հետաքրքրական են։

Ուստի մի կողմ եմ թողնում Ներկայ բարոյական կացութեան մանրամասնութիւնը, գոհանալով այն համառօտակի որոշելով. կեանքիս ամբողջ ընթացքում, ոչ շատ երկար, ինքզինքս այսպէս ստոր չեմ զգացել. այնքան ծանր, տանջալի եւ տխուր է ինձ համար։ իսկ ձեզ պարտք եմ համարում պարզել ամենը, որոնք եթէ ոչ Ներելի կը դարձնեն իմ այս վերջին երկու օրվան վարմունքը, գոնէ կը բացատրեն Նրա պատճառները։

Ամենից առաջ իմ սխուր, անմիտ եւ անկարելի գիւտի մասին։ Ի հարկէ դուք յիշում էք որ ես Աֆանասիչին մի տեսակ Սանխօ Պանչօյի էի վերածել եւ Նրա հետ անսասնի պէս էի վարվում։ Չը գիտեմ ի՞նչի երեւակայում էի թէ իմ վարմունքի այդ ձեւը Նրան հաճելի էր։ կան աշխարհում լաքէյական հոգիներ, որոնց համար հրամայական կոշտութիւնը հաճելի է։ Աֆանասիչը իր համբերատարութեամբ հանդէպ իմ յանդգնութիւնների, եւ ստրկական հաճոյակատարութեամբ ամրապնդում էր իմ այդ ինքնավստահութիւնը. Նա հնազանդութեան կատարեալ տաղանդն է առանց պատասխանդրութեան մի ծաղրածու։ Չը գիտեմ թէ ինչպէս պիտի ընդունէք ծեծը, բայց բարոյական եւ խօսքի ապտակները կուլ է տալիս ինչպէս ցերկի պայլաչօ. սակայն երեւաց որ այդքան առաձգական պատասխանդրութիւնն էլ իր եզրները ունի, որից այն կողմ չէ կարող անցնել. ամեն բան տանող համբերութիւնը պէտք է պայթի։

Եթէ չեմ սխալվում, Աֆանասիչը իր քաղցր տրամադրութեամբ ինձ մօտեցաւ ոչ այնքան բարի մտքով եւ ոչ իր ցանկութեամբ։ Կարծում եմ որ Նա ինձ մօտ Նշանակվեց, որովհետեւ տանտիրուհիները Նկատել էին որ ես ձեզ շատ ձանձրացնում եմ ընկերութեամբ եւ պատճառ դառնում ժամանակ եւ գրելու հաճոյքը կորցնելու։ Ես շատ Ներողութիւն եմ խնդրում ձեզ պատճառած ձանձրութիւնների համար։ Նրանց տհաճութիւնը ինքս իբրեւ աշխատաւոր եւ ազատ զբաղմունքի մարդ լիովին ըմբռնել կարող եմ։ Այդ տեսակ ձանձրոյթը երբեմն ինձնից մի վայրկեան կը կորզէ գլուխումս ձեւակերպված Նկարը, իսկ ձեր ծրագրած յօդուածը։ Բայց կրկնում եմ սիրահարվածների եսասիրութիւնը անխնայ է եւ կոյր։ Ինքդ ոչինչ չես անում, մտածում ես միայն սիրածիդ մասին, խանգարում ես եւ ուրիշի գործին. միեւնոյն ժամանակ երեւակայելով որ քո մտերմութեամբ այդ ուրիշին մեծ գոհունակութիւն ես պատճառել։ Այս ամենը, դժբախտաբար կշռեցի, չափեցի եւ զատեցի այսօր, վերջին խելքովս, որով շատ ուժեղ է ուու մարդը։

Մեր տանտիրուհիները կարծեմ աւելի նախատեսող էին եւ իմ ու ձեր միջեւ դրին Եփանասիչին։

Եւ քանի որ սրտաբաց եւ բաւական տիրապետող Նկարագրով մարդիկ, ինչպիսին իմս է. ուշադիր եւ յօրանջող ունկնդիրներից գերադասում են ուշադիր եւ յարգանքով լսողներին, դրա համար էլ ես կամաց կամաց ձեզ հանգիստ թողի եւ բարեկամացայ Աֆանասիչի հետ։

Նա ինքը ինձ մօտ բերնից փախցրեց որ Արինան է հրամայել պտըտցնելու Պրօվօսլայի շրջակաները, «ուղս հալցնելու» համար, որովհետեւ շատ հանգիստ եմ եղել, ու սկսել եմ առաջին ոտքերով զոփել» Այս ձիական անուշ արտայայտութիւններից կարելի է եզրակացնել թէ իմ բարոյական վարկս որչափ աննախանձելի բարձրութեան վրա է գտնվելիս եղել և ինչ յարգանք են տածել դէպի ինձ Պրօվօսլայում. բայց քանի որ այդ խօսքերը ինձ յայտնի եղան միայն յայտնի դրամայի եւ իմ մեկնումի Նախընթաց օրը, ուրեմն երկու շաբթուան ընթացքում ես ամենաբարեխիղճ կերպով կատարել եմ հալածված ձիու դերը կրքերս սանձահարելու համար։ Փայլուն չէ, բայց արժանի եմ եղել։ Թէեւ ցաւում եմ որ հեռացածս միջոցին չը թքեցի տիկին Արինայի երեսին բոլոր ստորնութիւնների համար։

Նոյն օրը երբ իմացայ Արինայի իմ մասին եղած այդ կարգադրութեան մասին, Աֆանասիչը հարբած ինձ խոստովանեց իր չափազանց ատելութիւնը դէպի ինձ, հէնց հանդիպումի առաջին վայրկեանից սկսած։ Բայց այդ ոչինչ է. այդ հիմա է այդպէս թւում Աֆանասիչին, որը իրօք այժմ ինձ ատում է։ Ընդհակառակը կար շրջան որ Նա ինձ պաշտում էր։ Գիտէք Նա գինեմոլ է. չը հարբած շատ տխուր է, սակ չունի. ընկերութիւն չըկայ. բնական ծաղրածութիւնը գործադրելու իսկ առիթ չըկայ։ Վաղուց, շատ վաղուց անյուսալիօրէն մենակ է. ոչ ընկերներ եւ ոչ բարեբարներ ունի որոնց վարժված է, առանց որի Նա տանջվում է, կեանքը կեանք չէ։ Ես Նրա հետ կոշտ ու քմահաճոյքներով էի, այնուամենայնիւ թոյլ էի տալիս բարեկամութիւն անել ինձ հետ որը վաղուց Նա չէր տեսել Վիկտորիան թագուհու Նման Նրան չէ Նկատում. Արինան վարվում է իր յատուկ ամբողջ թունաւորութեամբ։ Պրօվօսլայում Աֆանասիչը վայրենացել, կորցրել է ինքզինքը ուրիշ մարդկանց հաւասար ընտանեկան ընդունակութիւնը։

(Շարունակելի)

մարդոց միջեւ որոնք երէկ իրար սպաննել կը փորձէին ։ Մեր ցեղին նկարագիրը այդ է․ ճարոնացիները անգութ, պատերազմի առեն, ճակատամարտէն վերջը մեծ հաճոյքով կը սեղմեն հակառակորդին ձեռքը։

Ու այդպէս ինչու չսպասուի նոր արդիւնաւէտ աշխատանքի եւ բարօրութեան փուլ մը երկու ժողովուրդներուն համար ալ․ եթէ Ցարը կարենայ հաճութեամբ իր ժողովրդին տալ անհրաժեշտ բարեփոխումները, եթէ Ռուսիոյ մէջ, առանց յեղափոխութեան պայթումի, կատարուի հասարակական բարեչրջում մը, կը կրնեմ որ չենք կասկածեր թէ Ռուսիոյ համար պիտի բացուի մեծութեան եւ արդիւնաւէտ աշխատանքի փուլ մը։

Եւ այն առեն, եզրակացուց կոմս Մուցաքաթան, հաւանական է որ տեսնանք իմ բարեկամ Վիթէի գաղափարներուն յաղթանակը թէ Եւրոպական եւ թէ Ասիական Ռուսիոյ մէջ, որոնք եթէ յաղթանակէին առաջ երկու ժողովուրդները պիտի ազատէին ներկայ պատերազմին տանջանքներէն։

Տէր Խմբագիր,

Կը խնդրեմ երկտողս հրատարակէք ձեր պատուական թերթին մէջ։

1901 Օգոստոսի սկիզբէն մինչեւ 1903 դեկտ. վերջ Վառնայի Հնչակեան մասնաճիւղին մէջ պաշտօնավարած՝ եւ անկէ վերջ հեռացած եմ Վառնայէն անձնական գործով.

Մօտերս բարեկամներէս կիմանամ որ, Նամակով, Վառնայի Հնչակեան մասնաճիւղը ինձ համար ներքին հրջաբերական մը հանելով ամբաստանած է, Իբրեւ թէ ես Ծորուկ եւ Տուժիք խումբերէ առանց ընկալագրի կուսակցութեանս անունով դրամ առած եւ նպատակին չեմ հասուցած։

Կը խնդրեմ Վառնայի Հնչ. մասնաճիւղէն որ եթէ կայ այդ տեսակ խարդախութիւն մը թո՛ղ հրապարակ հանէ։

Վարդան Սուքիասեան

1905 30 Յունիս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս ամառ մէկ քանի տեսակ համագումարումներ կան Սօֆիայի մէջ․ Պուլկարական փաստաբաններու, ուսուցիչներու, կանանց, երաժիշտներու, ֆէլչերներու։ Փաստաբանական կոնգրէն առաջին անգամ բացուելուն համար Նախագահի առաջարկութեամբ ուզուեր է շնորհաւորական հեռագիր զարնել իշխանին և արդարադատութեան Նախարարի, սակայն բազմաթիւ հակառակորդներու պատճառով հեռագիրը առաջին նիստին յետաձգուեր է․ Երկրորդ նիստին որոշուեր է 8 ձայնի առաւելութեամբ հեռագրել թէ իշխանին և թէ Նախարարին․ Հաւաքուած փաստաբաններուն թիւն է 188․

— Իշխանական հրամանագրով մը օգոստոս 7ին անզի պիտի ունենան նահանգային ժողովուրդներու անդամաց ընտրութիւնը․ Ներքին գործոց Նախարարը այդ առթիւ շրջաբերական մը հանած է որով իշխանութեանց խստիւ կարգիլէ ոև է ճնշում գործ դնել ընդդիմադիր կուսակցութեանց պատկանող ընտրողներուն վրայ․

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

«Վէչէրնա Բօշթա» թերթին Պօլսէն կը հեռագրեն թէ. թուրք կառավարական շրջանակները կը պնդեն որ լուր առած են թէ Ժէներալ Ցօնչեվի և Մակեդոնիոյ ներքին կոմիտէներու մէջ մակեդոնական ընդհանուր ապստամբութեան համար համաձայնութիւն կայացած է․

— Յուլիս 6 ին Պօլսէն կը հեռագրեն որ կառավարութիւնը կը շարունակէ Բօսֆորը ամրացնել հակառակ ռուս դեսպանի բողոքներուն․

—Յունական Պատրիարքարանը Մակեդոնիոյ աւմէններուն տրրուած առանձնաշնորհումներին դէմ բողոքագիր մը յանձներ է Մեծ Վեզիրին, ամէն դիւանագիտական շրջանակները կարեւորութիւն չեն տար այդ բողոքագրին․

ՌՈՒՍԻԱ

Սլովօ թերթը կը վստահեցնէ որ երեսփոխանական ժողովին օրէնքը պիտի հրատարակուի գահաժառանգին ծննդեան օրը՝

— Վիթէ յուլիս 7 ին մեկնած է դէպի Վաշինկթըն․ «Նօվօյէ Վրէմեա» թերթը հակառակ է որ լիազօրներուն հաւաքման տեղը նշանակուած է Վաշինկթըն․ Թերթը Միացեալ Նահանգները պատճառ կը համարէ ներկայ պատերազմին, և ճարոնի ազդեցութիւնը զօրաւոր Ամերիկայի մէջ․

— Ֆինլանտիոյ Հելսինգֆօրս քաղաքէն կը հեռագրեն որ յուլիս 6ին ծերակուտական հրապարակին վրայ գլխաւոր կառավարչի օգնական Տօյրիխ ձեռքերէն վիրաւորուած է․ Յարձակողը փախեր է․ վիրաւորուածին վէրքերը ծանր չեն։ Ծերակոյտի դատախազ Իօհանը սպաննողը մշտնջենական բանտարկութեան դատապարտուած է․

— Պաքուի մէջ բազմաթիւ պօմպեր գտեր է ոստիկանութիւնը․

— Բեթերսպուրկի մէջ իշխանութիւնը ուզեր է ինժիներ և պետական խորհրդական Իվանիցկիին տունը խուզարկել․ Պ. Իվանիցկի ատրճանակ կը պարպէ և կը վիրաւորէ քանի մը ոստիկաններ, յետոյ կը բարձրանայ տանիքի վրայ ու կը յայտարարէ որ իրենց ձեռք տուողին կը սպաննէ․ Փողոցը, տան առջեւ բազմաթիւ ամբոխ կը հաւաքուի. խաչախները խարազանով կը հալածեն ամբոխը․ Վերջապէս Իվանիցկիյ, իր տունը ապրող օրիորդի մը հետ կը ձերբակալուի․

ՖՐԱՆՍԱ

Պարսից Շահը Բարիզ հասաւ և Լուպէէն ճաշի հրաւիրուեցաւ․

— Պաշտօնական շրջանակներու մէջ առանձին կարեւորութիւն մը չեն տար Ռուվիէի և Վիթէի տեսակցութեան։ Քանի մը թերթեր կը յայտնեն որ Վիթէ առանձին յանձնարարութիւններ չունի ֆրանսական կառավարութեան համար․

— Հազարապետ Թամպուրինի որ դատապարտուած էր հանրապետութեան դէմ սարքած դաւադրութեան մը պատճառով, ազատ արձակուած է․

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

— Լուր հասած է որ Սախալինը ցամաքին հետ միացնող ընդծովեայ հեռագրական թելը կտրուած է ճարոնացիներու կողմէն․ Այսպէսով ռուս զօրքերը ցամաքէն բոլորովին խզուած կըլլան․

— Թօքիոյէ եկած պաշտօնական տեղեկութիւններու համաձայն, ռուս զօրաբանակին կեդրոնը, որ կը գտնուի Տալնիի շրջանին մէջ ենթարկուելով ճարոնական յարձակումին զօրեղ դիմադրութիւն ցոյց տուած է․

Ճարոնացիները կը կրկնեն յարձակումը և ռուսները դիրքերէն կը հալածեն։ Այս յաղթութիւնը կապահովցնէ ճարոնացիներու Սախալինի ամբողջ հարաւային մասին գրաւումը․

— Ճարոնական ամիրալ Կամատան որ հրամանատարն է Սախալին զօրք իջեցնելու համար նշանակուած նաւաբաժնին և որուն գործը պիտի ըլլայ նաև ծովէն հովանաւորել ցամաքային պատերազմը Թօքիոյ կը հաղորդէ թէ ռուս զրահակիր «Իզումրուդ»ը որ ընկղմած էր ճարոնական ծովին մէջ բոլորովին կորսուած է և անկարելի է ծովէն հանել

— Յուլիս 7 ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ՝ ճարոնացիները պիտի պահեն իրենց դիրքերը Կիրինի քով, և ետանցուն գործունէութեան պիտի սկսին հիւսիսային Մանչուրիոյ մէջ․ Մեծ անհանգստութիւն կը տիրէ Ամուրի խորշին վրայ գտնուող Նիքօլաեւսք նաւահանգստի վիճակին առթիւ․

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. ընկ. Գործ. ժողովս կուգայ հրապարակաւ յայտարարել ի գիտութիւն պատուարժան բաժանորդաց թէ, իր միամեայ պաշտօնավարութեան լրացած ըլլալով, յառաջիկայ կիւրակէ. յուլիս 10, ցերեկէ վերջ ժամը 2 ին Ընդհ. Ժողով պիտի գումարուի Ազգ. վարժարանին մէջ, եւ թախանձանօք կը խնդրուի պատուարժան անդամներէ որ առանց բացառութեան հաճին ներկայ գտնուիլ․

ՕՐԱԿԱՐԳՆ Է.

1.— Համարատուութիւն Գործ. ժողովոյ, 2.— Ընտրութիւն Նոր Գործ. ժողովոյ.

Ի դիմաց Ազգ. ընկ. Գործ. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Ե. ԱԶԱՊԼՍՐ Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԱԶԴ

Չը վճարող բաժանորդներուն և գործակալներուն

Կը խնդրենք շտապել ձեր հաշիւները կարգադրել հին և նոր։

Յարգելի խմբագիր,

Մեր «Ընդարձակ Դպրոցական Առողջապահութիւնը» յանձնած ենք մամուլին, պատկերներու թիւը 120 ի բարձրացած է. կը խնդրենք յարգելի բաժանորդներին որ իրենց բաժանորդագինները շուտով մեզ հասցնեն. Բաժանորդագրութիւնը նոյն պայմաններով շարունակուելու է մինչեւ գրքի լոյս տեսնելը, սակայն մինչեւ այդ ժամանակ իրենց բաժանորդագինները չը վճարողները, բաժանորդ չը պիտի նկատուին եւ եթէ սրանք գիրքը ստանալ ցանկան իսկ, պարտաւորուած կրկնապատիկ գին պէտք է վճարեն.

Փութացէ՛ք աւիթից օգտուիլ, որովհետեւ բաժանորդագինը՝ 5 ֆրանք (2 րուպլի, 1 տոլար) շատ աժան նըշանակուած է, համեմատած մեծ ծախքին.

ԴՈԿՏ. Կ. ՓԱՇԱՅԵԱՆ

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ԵՆ

Բալախանի (Բագու).— Պ. Բժկպ. Ք. Օհանեան. Բաթում.— Տիկին Զէֆիւռ Ե. Գասպարեան. Թիֆլիս.— Տէրք Ն. Խ. Թաթիկեան Եղբարք (Գօլօվինսքի Պրոսպէկտ Կաֆէինիմասզգին). Թաւրիզ.— Պ. Դոկտոր Պ. Ասլանեան. Ամերիկայ.— Պ. Մ. Սատոյեան. 27 Պէչչ սթ. Պօսթօն Մաս.

Մեր հասցէն է

Ծօքտ. Բաչաեան Խան

(Էժիրդ) Ալէքսանտրիա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պուլկար կիմնազիայէ շրջանաւարտ մը մատչելի գներով աշակերտներ կը պատրաստէ պուլկար դպրոցներուն համար.

Դիմել խմբագրութեան.

Печатницана П. Глушковъ и С-ие, Варна